



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ.փոստ kotayk@mta.gov.am

11.04.2015

Հարգելի՛ ընթերցող

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի շրջանակներում նախատեսված մարզային միջոցառումների ծրագրին մաս կազմող բազմաժանր ձեռնարկների կողքին իր առանցքային տեղն է ունեցել «<Հիշում եմ և պահանջում...>> խորագրով շարադրությունների մրցույթը, որին մասնակցել են մարզի հանրակրթական դպրոցների աշակերտները:

Հիշյալ միջոցառումները համակարգող մարզային հանձնաժողովը մեծապես կարևորում է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի շրջանակներում իրականացվող տարբեր ծրագրերում նորոգյա սերնդի ստեղծագործական տաղանդի ներառումը, որն իրականում կարելի է համարել ապագային ուղղված մի ինքնատիպ ուղերձ և համազգային պահանջատիրության ուրույն դրսևորում:

Մարզի դպրոցականները թղթին են հանձնել հարազատ ժողովրդի պատմության վերաբերյալ իրենց ունեցած գիտելիքների ու ընկալումների վերլուծության արդյունքում ծնված մտքեր, որոնք միմյանց փոխլրացնելով՝ փաստում են, որ հայ տեսակի հավաքական հիշողությունը, 100 տարի անց ևս, աշխարհին ներկայանում է մի նոր սթափությամբ և նորովի իմաստավորում արդար պահանջի մեկդարյա ազդակները:

Դարձյալ կարևորելով «<Հիշում եմ և պահանջում...>> խորագրով շարադրությունների գաղափարը՝ միաժամանակ պետք է ընդգծենք, որ 100-րդ տարելիցի շրջանակներում նախատեսված մարզային միջոցառումների ծրագրում ներառված են նաև այլ նշանակալի նախաձեռնություններ, որոնք իրականացվել և իրականացվելու են մարզի հանրության ակտիվ մասնակցությամբ ու աջակցությամբ:

Հարգանքով

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ